Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հոդված 26. Ազգային անվտանգության մարմինների ծառայողին կադրերի տրամադրության տակ թողնելը

1. Ազգային անվտանգության մարմինների ծառայողը թողնվում է կադրերի տրամադրության տակ հետևյալ դեպքերում.

1) կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ՝ մինչև 2 ամիս ժամանակով.

~~2) ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցվելիս՝ մինչև տվյալ գործով վերջնական որոշում կայացնելը.~~

3) Հայաստանի Հանրապետության զինված ուժերից և այլ զորքերից ազգային անվտանգության մարմիններ տեղափոխելիս՝ մինչև 3 ամիս ժամանակով.

4) մեկ ամսից ավելի անհայտ բացակայելիս՝ մինչև վերադառնալը կամ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելը.

5) գերության մեջ գտնվելիս՝ մինչև ազատվելը.

6) նախածննդյան և հետծննդյան կամ երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող կին ծառայողի զբաղեցրած պաշտոնը կրճատվելիս՝ մինչև արձակուրդի ավարտը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածում ծառայողին վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:

3. Սույն հոդվածի առաջին մասի ~~2-րդ,~~ 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ծառայողի վարձատրությունն իրականացվում է նշված խոչընդոտները վերանալուց հետո, եթե պարզվում է, որ ծառայողի գործողություններում հանցակազմ չկա: Այդ դեպքում վարձատրությունն իրականացվում է կադրերի տրամադրության տակ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար՝ զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի չափով:

4. Սույն հոդվածի առաջին մասի 6-րդ կետով նախատեսված դեպքերում կադրերի տրամադրության տակ գտնվելիս կին ծառայողին տրվում են միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վճարները:

5. Ծառայողը կադրերի տրամադրության տակ է վերցվում սույն հոդվածի առաջին մասում նշված հանգամանքներն ի հայտ գալու կամ դրանց մասին հայտնի դառնալու օրվանից:

6. Սույն հոդվածի առաջին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում կադրերի տրամադրության տակ գտնվելիս ազգային անվտանգության մարմինները պարտավոր են ծառայողին՝ նրա կրթությանը և նախկինում զբաղեցրած պաշտոնի խմբին կամ դրանից մեկ աստիճան ցածր խմբին համապատասխանող պաշտոն առաջարկել: Կադրերի տրամադրության տակ գտնվելու սահմանված ժամկետը լրանալուց հետո ծառայողը, սույն օրենքով սահմանված կարգով, արձակվում է ծառայությունից:

(26-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 12.12.13 ՀՕ-163-Ն)